

և գրէնաւք» (Յիշատ. 12) : Իսկ Մարծպան Բ-ի որդին Ասլան Բէկ 1245ին նոյն վանքին տուած է «մեծածախ աւետարան ոսկով եւ մարգարտով եւ ակամքք պատուականաւք զարդարած» (Յիշատ. 25) : Դժբախտաբար ասոնք մեզի չեն հասած : Իրենց յիշատակութեամբ երկու Աւետարան միայն հասած է մեզի, որոնց մասին պիտի խօսինք իրենց կարգին :

Իրենց մեկէնասած ճարտարապետական յուշարձաններուն մասին մասնագիտօրէն ձեռնհաս չըլլալով, ի վիճակի չեմ հոս արժէքաւորելու : Գալով իրենց մեկէնասած գործերուն քանդակագործութեան զարգացմանը եւ պատկերագրութեան, հոս չեմ կրնար ծանրանալ, նախ անոր համար որ կատարեալ նկարներ կը պակսին ինծի եւ յետոյ՝ ինչ որ ծանօթ է ինծի, մասնաշատուկ նկարագիր մը չունի եւ մաս կը կազմէ ժամանակուան հայկական արուեստին ամբողջութեան : Սակայն ինչպէս ըսի, Գսեղի Մամիկոնեանները ցոյց կու տան ընտիր ճաշակ, նուրբ եւ կատարեալ արհեստագործութեան ըմբռնում՝ որոնք անուրանալի կերպով կը շեշտեն անոնց դնահատութեան բարձր աստիճանը եւ կրթութիւնը :

Ինչպէս պիտի տեսնենք, տոհմին սկիզբին նման վերջաւորութիւնն ալ կը կորսուի պատմական անորոշութեան մթութեան մէջ : Գիտենք որ մինչև ժԳ Դար կը պահեն իրենց գոյութիւնը : Ինչպէ՞ս շիջու իրենց յիշատակը Դրսեղի մէջ, կամ ո՞ւր գաղթեցին անկէ : Տեղեկութիւն կը պակսի : Ծանօթութեան ժուժկալ պատուիկ մը դանտնք Ղրիմի մէջ ցոյց կու տայ 1366ին : Ինչպէս շատ մը ուրիշ մանր Հայ իշխանական տուներ եւ տոհմեր, Գսեղի Մամիկոնեան տոհմն ալ ի սպառ կ'անհետանայ (կամ կը լուչ) Թիմուր Լէնկի կործանարար արշաւանքէն եւ անոր յաջորդող քոսսային վիճակէն վերջ, որ երկար ատեն աւերեց եւ արիւնոտեց Հայաստանը :

Մենք այս տոհմին ծանօթ անձերը անհաստ առ անհաս պիտի ներկայացնենք մեզի հասած իրենց յիշատակարաններով, արձանագրութիւններով եւ ժամանակակից մատենագրական տուեալներով : Մեր գործածած վկայութեանց յիշատակարանները իրենց ամբողջութեամբ գետեղած ենք մեր ներկայ սուսմանասիրութեան վերջը :

Հ Ա Մ Ա Զ Ա Ս Պ Ա

Ինք եղած է հիմնադիրը Գսեղի Մամիկոնեան տոհմին, որ, ըստ յիշատակարաններու, իր անուամբ Համազասպեան կոչուած է : Զարմանալի է որ իր մասին ոչ մէկ ծանօթութիւն կը գտնենք մեր մատենագրութեան մէջ, իրեն ժամանակակից : Սակայն ապահովաբար այնքան երեւելի եղած է, որ իր յաջորդներէն ոմանք իրենց Համազասպեան ըլլալը կը յիշեն, առանց Մամիկոնեանի : Օրինակ 1215ին «...Սարգսի, որդոյ Սմբատայ, թոռն Համազասպեանց...» (Յիշատ. 3) : 1215էն դարձեալ «Ես՝ Կոստանդ, որդոյ Գրիգորո, թոռն (Համազ)ասպեանց...» (Յիշատ. 4) : 1229ին «...Ես՝ Համլիկ, որդի Սմբատա յազգէ Համազասպանց...» (Յիշատ. 13) : 1258էն «Ես Գոհարմելիքոս, թոռն Համազասպեանց...» (Յիշատ. 24) : Թէև այլուր ալ կը գրեն 1229ին «...Ես Մարծպան որդի Սա(ր)գսի թոռն Համ(ազասպ)եանց յազգէ Մամիկոնեանց...» (Յիշատ. 12) : Կամ 1239ին «...Ես Համլիկ որդի Սմբատա եւ թոռն Համազասպա յազգէ Մամիկոնեանց...» (Յիշատ. 14) : Իր մասին առաջին անգամ յիշատակուած կը գտնենք 1191ին արձանագրութեան մը մէջ,